Ցերեկային Ճամբարների Արձանագրություն. Հավելված K

Ծանոթություն. տվյալ փաստաթուղթը հաճախակի թարմացվում է: Խնդրում ենք ստուգել կայքէջում նշված ամսաթիվը՝ ամենավերջին տարբերակի համար:

Վերջին Փոփոխությունները.

6/16/22

- Փոփոխություններ COVID-19 վարակի հետ շփման վերաբերյալ առցանց անվտանգ ինտերնետային հավելվածին՝ SPOT-ին (Բռնկումների Հայտնաբերման Ինտերնետային Ընդհանուր Հարթակ) հաղորդելու տարբերակում:
- Ավելացվել է ուղեցույց՝ COVID-19-ի Կանխարգելման Լավագույն Գործողություններ Փակ Մարզասրահների Օդափոխության Համար

4/11/22

- Այս փաստաթուղթը փոխարինում է նախորդ փաստաթղթին, որը հրապարակվել է 6/23/21-ին:

COVID-19-ով վարակման դեպքերի, հոսպիտալացումների և մահերի ցուցանիշները զգալիորեն նվազել են ձմեռային բռնկումից հետո, սակայն COVID-19-ը շարունակում է վտանգ ներկայացնել համայնքների և հատկապես այն անձանց համար, որոնք ավելի խոցելի են ծանր հիվանդությունների և COVID-19-ի հետևանքների նկատմամբ, ներառյալ տարեցները, իմունային անբավարարություն կամ որոշակի առողջական խնդիրներ ունեցող անձինք, ինչպես նաև յուրաքանչյուր անձ, որը դեռ պատվաստված չէ: Բոլորը պետք է շարունակեն ձեռնարկել նախազգուշական միջոցառումներ՝ տարածման վտանգը նվազեցնելու համար, որպեսզի պաշտպանեն առավել խոցելի խմբում գտնվող անձանց: Ստորև ներկայացված ուղեցույցը վերաբերում է Ցերեկային Ճամբարներին և նախատեսված է՝ նվազեցնելու հիվանդության տարածման և բռնկումների վտանգը այդպիսի տարածքներում: Խնդրում ենք նկատի ունենալ, որ այնպիսի բիզնեսները, ինչպիսիք են ցերեկային ճամբարները, կարող են իրենց հայեցողությամբ սահմանել Շրջանի անվտանգության պահանջներից ավելի սահմանափակող պահանջներ:

Խնդրում ենք նկատի ունենալ՝ այս փաստաթուղթը կարող է թարմացվել լրացուցիչ տեղեկությունների և աղբյուրների հասանելի դառնալու դեպքում, հետևաբար կանոնավոր կերպով ստուգեք Լոս Անջելեսի Շրջանի http://www.ph.lacounty.gov/media/Coronavirus/ կայքէջը՝ այս փաստաթղթի թարմացումներին տեղեկանալու համար:

Այս ստուգաթերթիկը ընդգրկում է՝

(1) Աշխատավայրի գործունեության ծրագրեր (քաղաքականություն) և գործողություններ՝ ուղղված աշխատակիցների առողջության պահպանմանը

(2) Ֆիզիկական հեռավորության ապահովման միջոցառումներ

(3) Վարակի վերահսկողությունը բարելավող միջոցառումներ

(4) Հաղորդակցություն աշխատակիցների և հանրության հետ

(5) Կարևոր ծառայություններին հավասար հասանելիություն ապահովող միջոցառումներ

Նշված հինգ ոլորտներին պետք է անդրադառնալ, եթե ձեր հաստատությունը մշակում է վերաբացման որևէ արձանագրություն:

Սույն արձանագրության մեջ ներառված Բոլոր Ցերեկային Ճամբարները, հնարավորության դեպքում, պետք է իրականացնեն ստորև նշված կիրառելի միջոցառումներից հնարավորինս շատերը: Մեղմացման բազմաթիվ ռազմավարությունների դասակարգումը լավագույն միջոցն է ձեր ծրագրի և վայրերի անվտանգությունը բարելավելու համար:

Ցերեկային Ճամբարի Անվանումը՝ _____

Հաստատության Հասցեն՝ _____

A. ԱՇԽԱՏԱՎԱՅՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐՆ ՈՒ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՈՒՂՂՎԱԾ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆԸ (ՆՇԵՔ ԲՈԼՈՐԸ, ՈՐՈՆՔ ԿԻՐԱՌԵԼԻ ԵՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ)

- ❑ Բոլոր աշխատակիցներին (ներառյալ վարձատրվող անձնակազմը և կամավորները, որոնք միասին կոչվում են «աշխատակիցներ») ասվել է, որ չգան աշխատանքի, եթե հիվանդ են: **Յուրաքանչյուր անձի, որի մոտ սկսում են առաջանալ COVID-19-ին համապատասխան ախտանիշներ, խստորեն հորդորվում է անցնել ախտորոշիչ թեստավորում FDA-ի կողմից թույլատրված COVID-19-ի թեստի միջոցով, որը կարող է ներառել ինքնուրույն իրականացվող ազատ վաճառվող թեստերը: Յուրաքանչյուր անձ, որի թեստի արդյունքը դրական է կամ որին բուժաշխատողը հայտնել է, որ կասկածվում է, որ նա ունի COVID-19 վարակ, պետք է հետևի Հանրային Առողջության Վարչության ինքնամեկուսացման ցուցումներին**: Ախտանիշներ ունեցող աշխատակիցը, որը չի խորհրդակցում բժշկի հետ կամ թեստ չի հանձնում, պետք է մեկուսանա 10 օրով:
- ❑ Աշխատավայրի բացակայությունների կանոնները վերանայվել և փոփոխվել են՝ ապահովելու համար, որ աշխատակիցները չենթարկվեն տույժերի՝ հիվանդության պատճառով տանը մնալու համար:
- ❑ Խստորեն խրախուսեք բոլոր աշխատողներին (վճարովի աշխատակիցներ և կամավորներ) ժամանակին պատվաստվել COVID-19-ի դեմ և ստանալ խթանիչ դեղաչափերը:
- ❑ Գործատուները, որոնք ունեն ճամբարում երկարաժամկետ աշխատող աշխատակիցներ, կարող են դիտարկել աշխատողների COVID-19-ի թեստավորման ծրագրի մշակումը՝ առաջարկելով շաբաթական թեստավորում այն բոլոր աշխատողներին, որոնք կարող են շփում ունենալ մյուս աշխատողների, օժանդակող անձնակազմի կամ մասնակիցների հետ: Առաջնահերթությունը պետք է տրվի այն աշխատողների թեստավորմանը, որոնք լիովին չեն բավարարում COVID-19-ի դեմ պատվաստման և խթանիչ դեղաչափերը ժամանակին ստանալու պահանջները:
- ❑ Տեղեկանալով, որ մեկ կամ մի քանի աշխատողների թեստի արդյունքը դրական է, գործատուն ունի պատրաստ ծրագիր կամ արձանագրություն, որպեսզի վարակված անձը (անձինք) անմիջապես մեկուսանա(ն), և որը ապահովում է, որ բոլոր աշխատողները, որոնք աշխատավայրում շփվել են վարակված անձի հետ և պետք է ինքնակարանտին պահպանեն, չգան աշխատանքի, քանի դեռ նրանց չի թույլատրվել վերադառնալ՝ համաձայն Հանրային Առողջության Վարչության հրամանների: Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս COVID-19-ին Արձագանքը Աշխատավայրում: Գործատուի ծրագիրը պետք է նախատեսի արձանագրություն, որպեսզի բոլոր աշխատակիցները կարողանան հասանելիություն ունենալ COVID-19-ի համար թեստավորմանը՝ վարակման լրացուցիչ դեպքերի վաղ հայտնաբերման և որոշելու համար, թե արդյոք աշխատավայրում եղել են վարակի հետ լրացուցիչ շփումներ, որոնք կարող են պահանջել COVID-19-ի վերահսկման լրացուցիչ միջոցառումներ:
- ❑ Խստորեն հորդորվում է իրականացնել մուտքի ստուգումներ՝ նախքան աշխատակիցները, այլ օժանդակող անձինք և այցելուները կարող են մուտք գործել աշխատանքային տարածք: Cal/OSHA-ն գործատուներից պահանջում է մշակել և իրականացնել նախքան աշխատավայր մտնելը աշխատակիցների COVID-19-ի ախտանիշների ստուգման գործընթաց: Տե՛ս Հանրային Առողջության Վարչության Ախտանիշների Ստուգման փաստաթուղթը՝ հետագա մանրամասների և ստուգման տարբերակների համար: Ճամբարը կարող է հետևել Հանրային Առողջության Վարչության TK-12 Դպրոցներում Աշխատակիցների Ախտանիշների Վերաբերյալ Որոշման ուղեցույցին այն անձանց համար, որոնց թեստի արդյունքը դրական է նախքան աշխատավայր մտնելը կամ աշխատավայրում գտնվելիս: Ստուգումը պետք է ներառի Որոշումների Ուղեցույցում թվարկված հնարավոր COVID-19-ի վարակին համապատասխանող ախտանիշների ստուգում և պետք է պարզի՝ արդյոք տվյալ անձը գտնվում է մեկուսացման կամ կարանտին պահպանելու հրամանների ներքո կամ ունեցել է հայտնի

շփում COVID-19 վիրուսով վարակված որևէ անձի հետ: Այս ստուգումները կարող են կատարվել հեռակա կարգով՝ ժամանելուց առաջ, կամ անձնապես՝ աշխատակիցների ժամանման պահին:

- ❑ Ցերեկային ճամբարներից **պահանջվում է** Հանրային Առողջության Վարչությանը տեղեկացնել հաստատված COVID-19-ով վարակված բոլոր այն անձանց մասին, որոնք հիվանդության օրվանից սկսած 14 օրվա ընթացքում որևէ պահի գտնվել են տարածքում: Հիվանդության սկիզբը COVID-19-ի ախտանիշների առաջացման առաջին օրն է կամ COVID-19-ի համար թեստավորման օրը՝ որը որ ավելի վաղ է տեղի ունեցել:
- ❑ Հանրային Առողջության Վարչությանը հաստատության տարածքում COVID-19-ով վարակման դեպքերի մասին նախընտրելի է տեղեկացնել առցանց զեկուցման տարբերակով՝ համակարգչի կամ հեռախոսի միջոցով, որոնք հասանելիություն ունեն անվտանգ առցանց հավելվածին՝ SPOT-ին (Բռնկումների Հայտնաբերման Ինտերնետային Ընդհանուր Հարթակ) https://spot.cdph.ca.gov/s/?language=en_US: Եթե պետք է հաղորդել մի քանի դեպքերի մասին, հաստատությունները կարող են ներկայացնել իրենց հաղորդումները՝ օգտագործելով <<Զանգվածային Վերբեռնման Նմուշը>>, որը տեղակայված է SPOT Հարթակում: Վարակման դեպքերի մասին բոլոր ծանուցումները անհրաժեշտ է ներկայացնել ճամբարի անձնակազմի կողմից դեպքի մասին տեղեկանալուց հետո **1 աշխատանքային օրվա ընթացքում:**
- ❑ Եթե 14 օրվա ընթացքում հաստատության տարածքում հայտնաբերվում է COVID-19-ով վարակման 3 կամ ավելի դեպք, գործատուն պետք է այդ խմբակային դեպքի մասին **անմիջապես** հաղորդի Հանրային Առողջության Վարչությանը՝ հաղորդման վերոնշյալ տարբերակով: Հանրային Առողջության Վարչությունը կհամագործակցի ցերեկային ճամբարի հետ՝ որոշելու, թե արդյոք խմբակային վարակման դեպքը բռնկում է, որը և կպահանջի հանրային առողջության կողմից բռնկման քննություն:
- ❑ **Ճամբարի բոլոր աշխատակիցներին** պահանջ լինելու դեպքում **ավելի լավ պաշտպանող դիմակների տրամադրման պահանջ:** Խստորեն հորդորվում է, սակայն չի պահանջվում, որ փակ տարածքներում գտնվելիս աշխատակիցները կրեն վիրաբուժական կարգի դիմակներ (նաև կոչվում են բժշկական գործողությունների համար նախատեսված դիմակներ) կամ ավելի բարձր մակարդակի Անձնական Պաշտպանության Միջոցներ՝ PPE (օրինակ՝ KN95 կամ N95 շնչառական դիմակներ): Նրանց, որոնք կրում են վիրաբուժական դիմակներ, հորդորվում է կրել կրկնակի դիմակ՝ վիրաբուժական դիմակի վրայից կտորե դիմակ, ավելի լավ պաշտպանության համար: Գործատուներից պահանջվում է ըստ պահանջի, կամավոր օգտագործման համար անվճար տրամադրել դեմքը լավ գրկող բժշկական դիմակներ և շնչառական դիմակներ (respirator) իրենց այն աշխատակիցներին, որոնք աշխատում են փակ տարածքներում և շփվում են ուրիշների հետ: Խնդրում ենք նկատի ունենալ, որ համաձայն CAL/OSHA-ի պահանջի՝ գործատուները պետք է կամավոր օգտագործման համար ըստ պահանջի տրամադրեն շնչառական դիմակներ յուրաքանչյուր չպատվաստված աշխատակցի, որն աշխատում է փակ տարածքներում կամ ընդհանուր փոխադրամիջոցներում:
- ❑ Խստորեն հորդորվում է, սակայն չի պահանջվում, որ բոլոր աշխատակիցները մշտապես կրեն դիմակ փակ տարածքներում գտնվելիս՝ բացառությամբ, երբ միայնակ են աշխատում փակ դռներով մասնավոր սենյակներում կամ ուտում կամ խմեում են:
- ❑ Խորհուրդ է տրվում կրճատել տարածքի զբաղվածությունը և հնարավորինս ավելացնել աշխատակիցների միջև տարածությունը ցանկացած սենյակում կամ տարածքում, որն օգտագործվում է բազմաթիվ աշխատակիցների կողմից ճաշի և/կամ ընդմիջման համար: Դա կարելի է անել հետևյալ կերպ.
    - Սահմանել տարածքի առավելագույն զբաղվածություն, որը համապատասխանում է անձանց միջև սենյակներում կամ ընդմիջումների համար նախատեսված տարածքներում առնվազն վեց ոտնաչափ հեռավորության պահպանմանը, և
    - Փոփոխել ընդմիջումների և ճաշելու ժամերն այնպես, որ նվազեցվի զբաղվածությունը սենյակներում կամ ճաշելու և ընդմիջումների համար նախատեսված տարածքներում և
    - Տեղադրել սեղաններն առնվազն վեց ոտնաչափ հեռավորությամբ և ապահովել վեց ոտնաչափ տարածություն նստատեղերի միջև՝ հեռացնելով կամ փակելով նստատեղերը՝ նվազեցնելու համար զբաղվածությունը, հատակին տեղադրելով նշաններ՝ ապահովելու համար

հեռավորությունը, և դասավորելով նստատեղերն այնպես, որ նվազագույնի հասցվի դեմ առ դեմ շփումը: Կարող է դիտարկվել նաև սեղանների և նստատեղերի միջև պատնեշների կիրառումը, սակայն դրանք չեն հանդիսանում զբաղվածության նվազեցմանը կամ ֆիզիկական հեռավորության պահպանմանը փոխարինող միջոցներ:

- ❑ Պետքարանները և այլ ընդհանուր օգտագործման տարածքները ախտահանվում են հաճախ, սակայն ոչ պակաս քան աշխատանքային օրվա ընթացքում մեկ անգամ, հետևյալ ժամանակացույցով.
  - Պետքարաններ _____
  - Այլ _____
- ❑ Ախտահանիչները և այլ համարժեք պարագաները հասանելի են աշխատակիցներին հետևյալ վայր(եր)ում.

  _____
- ❑ COVID-19-ի դեմ արդյունավետ ձեռքերի ախտահանիչ միջոցը հասանելի է բոլոր աշխատակիցներին հետևյալ վայր(եր)ում.

  _____
- ❑ Աշխատակիցներին հիշեցվում է հաճախակի լվանալ ձեռքերը:
- ❑ Այս արձանագրության պատճենը տրամադրվել է յուրաքանչյուր աշխատակցի:
- ❑ Վերահսկեք անձնակազմի բացակայությունները և ունեցեք վերապատրաստված պահեստային աշխատակիցների ցանկ, եթե կան այդպիսիք:
- ❑ Սույն ցանկում նկարագրված բոլոր ռազմավարությունները՝ բացառությամբ դրանց, որոնք կապված են աշխատանքի ընդունման պայմանների հետ, կիրառվում են առաքում իրականացնող աշխատակիցների և ցանկացած այլ ընկերությունների նկատմամբ, որոնք կարող են գտնվել տարածքում՝ որպես երրորդ կողմ:
- ❑ Ընտրովի. նկարագրեք իրականացվող այլ միջոցառումները.

  _____

B. ՖԻԶԻԿԱԿԱՆ ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

ԺԱՄԱՆՈՒՄ ԵՎ ՄԵԿՆՈՒՄ

- ❑ Եթե փոխադրման միջոցները (օրինակ՝ ավտոբուսները) օգտագործվում են Ճամբարի կողմից, վարորդները պետք է իրականացնեն անվտանգության բոլոր գործողությունները և կանոնները, որոնք նշված են անձնակազմի մյուս անդամների համար (օրինակ՝ ձեռքերի հիգիենա, դիմակ և ֆիզիկական հեռավորություն):
  - Վարորդներին և ուղևորներին խստորեն հորդորվում է, սակայն նրանցից չի պահանջվում կրել դիմակ:
  - Հնարավորինս երկար բաց պահեք բոլոր պատուհանները՝ լավ օդափոխությունը պահպանելու համար: Խուսափեք օդը շրջանառող սարքերի օգտագործումից, երբ մեքենայում կան ուղևորներ, օգտագործեք մեքենայի օդորակիչները՝ դրսի մաքուր օդը ներս բերելու համար:
- ❑ Խստորեն հորդորվում է, սակայն չի պահանջվում, որ բոլոր ճամբարականները, աշխատակիցները և 2 տարեկան և ավելի բարձր տարիքի այցելուները կրեն դիմակ փակ տարածքներում: 2-ից 8 տարեկան երեխաները պետք է կրեն դիմակ մեծահասակների հսկողության ներքո:
- ❑ Հնարավորության դեպքում փոփոխեք ժամանման և մեկնելու ժամերը և տարածքները՝ նվազեցնելու մարդկանց կուտակումները՝ չստեղծելով ժամանակի հետ կապված լրացուցիչ դժվարություններ ընտանիքների համար:

ՀԱՆԳՍՏԻ ՏԱՐԱԾՔՆԵՐ

- ❑ Խստորեն հորդորվում է, սակայն չի պահանջվում, որ բոլոր այցելուները և ճամբարականները կրեն գործող պահանջներին համապատասխանող դիմակներ ճամբարի փակ տարածքներում գտնվելիս՝ բացառությամբ լողալիս, քնելիս, ուտելիս/խմելիս: Դիմակներն առնվազն պետք է լինեն ոչ հյուսված նյութի մի քանի շերտերից պատրաստված ոչ կտորե դիմակներ՝ քթի հատվածում լարով: (Կտորե դիմակները, որոնք համապատասխանում են ASTM-ի բարձր զտման արդյունավետության չափանիշներին [ASTM F3502-մակարդակ 2] նույնպես համապատասխանում են դիմակների գործող պահանջներին: Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս ph.lacounty.gov/masks կայքէջը): Այս հորդորը վերաբերում է բոլոր չափահասներին և 2 տարեկան և ավելի բարձր տարիքի երեխաներին: Ձեր աշխատակիցների, ճամբարականների և այցելուների անվտանգությանը նպաստելու համար դիտարկեք դիմակների հասանելիությունն այն ճամբարականների և այցելուների համար, որոնք խնդրում են դիմակ տրամադրել կամ ժամանում են առանց դրանց:
- ❑ Հնարավորինս ավելացրեք նստատեղերի, սեղանների և մահճակալների միջև հեռավորությունը:
- ❑ Նվազագույնի հասցրեք ոչ կարևոր այցելուների և կամավորների ներկայությունը:
- ❑ Անհրաժեշտության դեպքում օգտագործեք այլընտրանքային տարածքներ, ներառյալ ավելի շատ բացօթյա տարածքների կանոնավոր օգտագործումը, եթե եղանակային պայմանները թույլ են տալիս, և ճաշարանների ու այլ ընդարձակ փակ տարածքների օգտագործումը՝ ֆիզիկական հեռավորություն ապահովելու համար:
- ❑ Շնչառական կաթիլներ առաջացնող գործողությունների դեպքում, ինչպիսիք են ֆիզիկական ծանր գործողությունները, կամ երգելը, ավելացրեք անձանց միջև հեռավորությունը՝ մարդկանց կուտակումներից խուսափելու համար, և հնարավորության դեպքում այդպիսի գործողությունները իրականացրեք բացօթյա տարածքներում:
- ❑ Նախատեսեք ֆիզիկական ուղեցույցներ, ինչպիսիք են հատակներին կամ մայթերին ժապավենների, իսկ պատերին՝ ցուցանակների տեղադրումը, որպեսզի օգնեք ճամբարի անձնակազմին և այցելուներին՝ խուսափել մարդկային կուտակումներից շարքերում գտնվելիս և այլ ժամանակ (օրինակ՝ <<միակողմանի քայլուղիներ>> ստեղծելու համար ուղղորդող ուղեցույցներ միջանցքներում, ճաշելու տարածքներում):

ՃԱՇԵԼ

- ❑ Հնարավորության դեպքում ապահովեք, որ այցելուները և ճամբարի անձնակազմը ճաշեն և թեթև ընդմիջումներ անեն բացօթյա կամ լավ օդափոխվող տարածքներում՝ հնարավորինս պահպանելով ֆիզիկական հեռավորությունը:
- ❑ Եթե ճաշը մատուցվում է ճաշելու ընդհանուր, փակ սենյակում, խորհուրդ է տրվում տեղում ձեռնարկել միջոցառումներ՝ ֆիզիկական հեռավորություն ստեղծելու և օդափոխությունը ավելացնելու համար:

C. ՎԱՐԱԿԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

- ❑ Նշանակեք աշխատակից (օրինակ՝ ճամբարի բուժակ կամ բուժաշխատող), որը պատասխանատու կլինի COVID-19-ի հետ կապված մտահոգություններին արձագանքելու համար: Բոլոր աշխատակիցները և ընտանիքները պետք է իմանան ով է այդ անձը և ինչպես կարելի է կապ հաստատել նրա հետ: Այս անձը պետք է վերապատրաստված լինի՝ համակարգելու փաստաթղթագրումն ու գտնելու վարակակրի հետ հնարավոր շփում ունեցածներին, որպեսզի տեղանքում գրանցված COVID-19-ով վարակման բոլոր դեպքերի մասին ծանուցվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում հաղորդի տարածաշրջանի առողջության պատասխանատուներին:
- ❑ Առողջ հիգիենայի վարքագծին օժանդակելու համար ապահովեք բավարար պարագաներ, այդ թվում՝ օճառ, անձեռոցիկներ, անհպում աղբամաններ և առնվազն 60 տոկոս էթիլային սպիրտ պարունակող ձեռքի ախտահանիչներ այն աշխատակիցների և ճամբարականների համար, որոնք կարող են անվտանգ օգտագործել ձեռքի ախտահանիչը:

- Սովորեցրեք ճամբարականներին հետևյալ անձնական պաշտպանիչ միջոցառումները.
  - Լվանալ ձեռքերը կանոնավոր կերպով ուտելուց առաջ և հետո, հազալուց կամ փռշտալուց հետո, դրսում գտնվելուց հետո և պետքարանից օգտվելուց հետո:
  - Խուսափել աչքերին, քթին և բերանին դիպչելուց:
  - Փակել բերանը հազալիս կամ փռշտալիս:
  - Քիթը մաքելու համար օգտագործել անձեռոցիկ և հազալիս/փռշտալիս փակել բերանը անձեռոցիկով կամ արմունկով:
- Դիտարկեք այնպիսի ժամանակացույցները, որոնք հնարավորություն կտան ճամբարի աշխատակիցներին և ճամբարականներին կանոնավոր կերպով լվանալ ձեռքերը՝ համակարգված ընդմիջումներով:
- Ճամբարականները և աշխատակիցները պետք է 20 վարկյան լվանան ձեռքերը օճառով՝ օճառը քսելուց հետո ձեռքերը լավ տրորելով, և ձեռքերը լավ չորացնելու համար օգտագործեն թղթե սրբիչներ (կամ մեկանգամյա օգտագործման կտորե սրբիչներ):
- Աշխատակիցները պետք է լվանան ձեռքերը և այդպիսով օրինակ ծառայեն: Օրինակ՝ ավելի երիտասարդ ճամբարականների համար օգտագործեք լոգարանից օգտվելու ժամանակը որպես հնարավորություն՝ ամրապնդելու առողջարար սովորությունները և վերահսկելու ձեռքերի պատշաճ լվացումը:
- Ճամբարականներն ու աշխատակիցները պետք է օգտագործեն ձեռքերի ախտահանիչ միջոց, երբ հնարավոր չէ լվանալ ձեռքերը: Ախտահանիչն անհրաժեշտ է տրորել ձեռքերին, մինչև այն ամբողջությամբ չորանա: Ծանոթություն. ձեռքերը հաճախակի լվանալը ավելի արդյունավետ է, քան ախտահանիչների օգտագործումը՝ հատկապես երբ ձեռքերը տեսանելիորեն կեղտոտ են:
- 9 տարեկանից փոքր երեխաները պետք է օգտագործեն ձեռքի ախտահանիչը մեծահասակների հսկողությամբ: Ախտահանիչը կուլ տալու դեպքում զանգահարեք Թունավորումների Վերահսկման Կենտրոն՝ 1-800-222-1222 հեռախոսահամարով: Նախընտրելի են Էթիլային սպիրտի հիմքով ձեռքի ախտահանիչները և պետք է օգտագործվեն, եթե կա հավանականություն, որ երեխաները դրանք կօգտագործեն առանց մեծահասկաների հսկողության: Իզոպրոպիլենային հիմքով ձեռքի ախտահանիչները ավելի թունավոր են և կարող են ներծծվել մաշկի միջոցով:
- Ճամբարականները պետք է տեղեկացված լինեն Հանրային Առողջության Վարչության խիստ հորդորների մասին՝ կրել դիմակներ բոլոր փակ տարածքներում այլ անձանց շրջապատում գտնվելիս:
- Ցայտաղբյուրները կարող են հասանելի լինել օգտագործման համար: Լեգիոներների հիվանդության և ջրի հետ կապված այլ հիվանդությունների վտանգը նվազագույնի հասցնելու համար ձեռնարկեք միջացառումներ՝ ապահովելու համար, որ բոլոր ջրային համակարգերն ու համանման վայրերը (օրինակ՝ ցայտաղբյուրները, դեկորատիվ շատրվանները) անվտանգ լինեն օգտագործման համար հաստատության՝ երկարատև չգործելուց հետո: Սա ներառում է պատշաճ լվացում և կարող է պահանջել լրացուցիչ մաքրման աշխատանքներ (ներառյալ ախտահանում): Տե՛ս CDC-ի Երկարատև Չգործելուց Կամ Կարճատև Գործելուց Հետո Շենքերի Վերաբացման Ուղեցույցը՝ https://www.cdc.gov/coronavirus/2019-ncov/php/building-water-system.html.
- Հաճախակի հպման մակերեսները, ինչպիսիք են՝ դռան բռնակները, լույսի անջատիչները, լվացարանների բռնակները, լոգարանի մակերեսները, սեղանները և փոխադրամիջոցների ներսի մակերեսները, պետք է մաքրվեն կանոնավոր կերպով:
- Մաքրող պարագաներ ընտրելիս օգտագործեք այն ապրանքները, որոնք ընգրկված են Շրջակա Միջավայրի Պաշտպանության Գործակալության (EPA) կողմից հաստատված՝ COVID-19-ի դեմ արդյունավետ ապրանքների «N/Ն» ցուցակում, և հետևեք ապրանքի ցուցումներին: Այս ապրանքները պարունակում են բաղադրիչներ, որոնք ավելի անվտանգ են ասթմա ունեցող անձանց համար:
- Օգտագործեք ախտահանիչներ, որոնք, ըստ պիտակի, արդյունավետ են առաջացող վիրուսային պաթոգենների դեմ՝ հետևելով ապրանքի վրա նշված՝ նյութի նոսրացման մակարդակի և շփման ժամանակի վերաբերյալ ցուցումներին: Աշխատակիցներին վերապատրաստեք քիմիկատների

վտանգների, արտադրողի ցուցումների և անվտանգ օգտագործման Cal/OSHA-ի պահանջների համար:

- ❑ Մաքրման աշխատանքներ կատարող աշխատակիցները, որոնք պատասխանատու են տարածքի մաքրման և ախտահանման համար, պետք է ունենան պատշաճ պաշտպանիչ պարագաներ, այդ թվում՝ ձեռնոցներ, աչքերը պաշտպանող միջոցներ, շնչառական դիմակներ (respirators) և այլ համապատասխան պաշտպանիչ միջոցներ՝ ըստ ապրանքի ցուցումների պահանջի: Բոլոր ապրանքները պետք է պահել երեխաների համար անհասանելի վայրում և ունենան սահմանափակ հասանելիություն:
- ❑ Մաքրելիս օդափոխեք տարածքը մինչ ճամբարականների ժամանումը, ծրագրեք պատշաճ մաքրում այն ժամանակ, երբ ճամբարականները ներկա չեն: Օդափոխման համակարգը օգտագործելու դեպքում օգտագործեք այն հատկությունը, որի դեպքում ներս է բերվում մաքուր օդ: Փոխեք և ստուգեք օդի զտիչները և զտման համակարգերը՝ օդի որակը բարելավելու համար:
- ❑ Հետևեք Կալիֆորնիայի Հանրային Առողջության Վարչության՝ COVID-19-ը և Փակ Տարածքներում Օդի Որակի Բարելավումը՝ https://www.cdph.ca.gov/Programs/CID/DCDC/Pages/COVID-19/COVID-19-and-Improving-Indoor-Air-Quality-in-Schools.aspx: Արդյունավետ օդափոխությունը փոքր մասնիկների (աերոզոլների) միջոցով վարակի փոխանցումը նվազեցնելու կարևորագույն միջոցներից մեկն է:
- ❑ Փակ տարածքներում սպորտաձևերով զբաղվող ճամբարները պետք է նաև հետևեն Հանրային Առողջության Վարչության հետևյալ էջին՝ COVID-19-ի Կանխարգելման Լավագույն Գործողություններ Մարզասրահների Օդափոխության Համար:
- ❑ Եթե պատուհաններ բացելը անվտանգ չէ կամ վնաս է առողջությանը, օդի հոսքը բարելավելու համար դիտարկեք այլընտրանքային ռազմավարություններ, ինչպես օրինակ՝ մեծացրեք HVAC համակարգերի կենտրոնացված օդի զտումը (օդի զտում առնվազն MERV 13-ի չափով):

ՍՏՈՒԳԵՔ ՃԱՄԲԱՐԱԿԱՆՆԵՐԻՆ

- ❑ Վերապատրաստեք անձնակազմին և սովորեցրեք ճամբարականներին և նրանց ընտանիքներին, թե երբ նրանք պետք է մնան տանը և երբ կարող են վերադառնալ ճամբար: Խրախուսեք աշխատակիզներին և ճամբարականներին մնալ տանը, եթե հիվանդ են:
- ❑ Խստորեն հորդորվում է ստուգել բոլոր այցելուների COVID-19-ի ախտանիշները, ինչպես նաև հաստատված COVID-ով վարակված անձի հետ վերջերս հայտնի սերտ շփման հանգամանքը՝ նախքան ճամբարի դռան մոտ հասնելը կամ նախքան ճամբար մտնելը:
- ❑ Հաստատությունը կարող է հետևել Հանրային Առողջության Վարչության՝ TK-12 Դպրոցներում Ախտանիշների Վերաբերյալ Որոշումների Ուղեցույցներին՝ այն անձանց համար, որոնց ստուգման ժամանակ ախտանիշներ են նկատվել նախքան հաստատություն մտնելը: Հարցրեք բոլոր անձանց վերջին 24 ժամվա ընթացքում COVID-19-ի ախտանիշներ ունենալու մասին և արդյոք նրանց տանը որևէ մեկի COVID-19-ի թեստի արդյունքը դրական է: Ախտանիշների ստուգումներն անցկացվում են նախքան այցելուներին կթույլատրվի մուտք գործել հաստատություն: Ստուգումները պետք է ներառեն Որոշումներում նշված հնարավոր COVID-19-ի վարակին համապատասխանող ախտանիշների ստուգում: Այս ստուգումները կարող են կատարվել անհատապես կամ այլընտրանքային եղանակներով, օրինակ՝ ստուգման առցանց համակարգերով կամ համաձայն հաստատության մուտքի մոտ փակցված ցուցանակների, որոնք տեղեկացնում են, թե ինչպիսի ախտանիշներով այցելուները չպետք է մտնեն հաստատություն:
- ❑ Ճամբար մի ընդունեք ցանկացած երեխայի, ծնողի, խնամատարի, կամ աշխատակցի, որն ունի COVID-19 վարակին համապատասխան ախտանիշներ:
- ❑ Ամբողջ օրվա ընթացքում հետևեք՝ արդյոք աշխատակիցների և ճամբարականների մոտ հիվանդության նշաններ չեն առաջանում. ճամբարականներին և աշխատակիցներին ուղարկեք տուն COVID-19 վարակին համապատասխան ախտանիշների դեպքում: Եթե անհրաժեշտ է, մարդկանց ուղարկեք համապատասխան բժշկական հաստատություն, այլ ոչ թե տուն:

- Դիտարկեք այցելուների և աշխատակիցների համար COVID-19-ի շաբաթական թեստավորում պահանջելը կամ խիստ հորդորելը այն ժամանակահատվածում, երբ նրանք հաճախում են ճամբար կամ աշխատում են ճամբարում: Ընդունվում են ազատ վաճառվող (OTC) ինքնուրույն կատարված թեստերի արդյունքները: Ընդունվում են ազատ վաճառվող թեստերի ինքնուրույն հաղորդվող արդյունքները, նույնիսկ եթե հասանելի չէ անկախ ստուգումը:
    - Խնդրում ենք նկատի ունենալ. ստուգիչ թեստավորումը խորհուրդ չի տրվում այն անձանց, որոնք ապաքինվել են լաբորատորիայում հաստատված COVID-19-ից վերջին 90 օրվա ընթացքում և չունեն ախտանիշներ:

ԵԹԵ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԸ ԿԱՄ ՃԱՄԲԱՐԱԿԱՆՆԵՐԸ ՀԻՎԱՆԴԱՆՈՒՄ ԵՆ

- Սահմանեք մեկուսացման վայր կամ տարածք՝ առանձնացնելու բոլոր անձանց, որոնց մոտ դրսևորում են COVID-19-ի ախտանիշներ: Լավ տարբերակ է արևից պաշտպանված բացօթյա տարածքը, որտեղ հիվանդ անձինք կարող են հեռավորություն պահպանել ուրիշներից, մինչ սպասում են, որ իրենց տուն տեղափոխեն:
- Ապահովեք, որ նրանք կրեն վիրաբուժական դիմակներ, եթե 2 տարեկանից մեծ են, և չունեն դիմակը դնելու և հանելու հետ կապված խնդիրներ, ինչպես նաև չեն դժվարանում շնչել դիմակը կրելիս:
- Ախտանշաններ ունեցող ճամբարականները կամ աշխատակիցները պետք է մնան մեկուսացման սենյակում կամ տարածքում մինչ նրանց հնարավոր կլինի տեղափոխել տուն կամ բժշկական հաստատություն, որքան հնարավոր է շուտ:
- Սահմանեք հիվանդ անձին, ըստ անհրաժեշտության, անվտանգ ձևով իրենց տուն կամ բժշկական հաստատություն տեղափոխելու ընթացակարգեր: Անմիջապես զանգահարեք 9-1-1, եթե անձն ունի շարունակական ցավ կամ ճնշում կրծքավանդակում, շփոթվածություն կամ կապտավուն շուրթեր կամ դեմք:
- Խորհուրդ տվեք աշխատակազմի հիվանդ անդամներին և ճամբարականներին չվերադառնալ, մինչև նրանք բավարարեն ճամբարի տեղանք վերադառնալու պահանջները, որոնք նշված են ախտանիշներ ունեցող անձանց համար նախատեսված Որոշումների Ուղեցույցներում:
- Տեղեկանալով այն մասին, որ աշխատակցի կամ ճամբարականի մոտ գրանցվել է COVID-19-ի թեստի դրական արդյունք, հաստատությունը պետք է վարակված անձին կարգադրի մեկուսանալ տանը և այդ մասին ծանուցի վարակված անձի հետ շփված բոլոր անձանց: Խնդրում ենք ծանոթանալ TK-12-ի Վարակի Հետ Շփումների Կառավարման Ծրագրին TK-12-ի Գործիքակազմի Էջում՝ մանրամասն ուղեցույցի համար՝ ինչպես կառավարել վարակման այս իրադարձությունը վարակման դեպքերի, սերտ շփում ունեցած անձանց նույնականացման և նրանց գործողությունների, ինչպես նաև հաղորդման և ծանուցման ընթացակարգերի վերաբերյալ: Հաստատությունները կարող են նաև դիմել հանրային առողջության վարչության ուղեցույցի էջերին՝ դեպքերի և սերտ շփում ունեցած անձանց համար՝ որպես լրացուցիչ աղբյուր:
- Աշխատակիցների ուղեցույցի լրացուցիչ մանրամասներին հաստատությունները կարող են ծանոթանալ այստեղ՝ COVID-19 Ունեցող Աշխատակիցներ. Աշխատանքի Վերադառնալու Ուղեցույց:
- Հաստատություններից **պահանջվում է** Հանրային Առողջության Վարչությանը հաղորդել հաստատված COVID-19-ով վարակված աշխատակիցների և ճամբարականների մասին, որոնք նախքան հիվանդանալը 14 օրերի ընթացքում որևէ պահի գտնվել են հաստատության տարածքում: Հանրային Առողջության Վարչությանը հաստատության տարածքում COVID-19-ով վարակման դեպքերի մասին նախընտրելի է տեղեկացնել ապահով առցանց հաղորդման տարբերակով, որը կարելի է անել համակարգչով կամ հեռախոսով, որոնք հասանելիություն ունեն անվտանգ առցանց հավելվածին՝ SPOT-ին (Բռնկումների Հայտնաբերման Ինտերնետային Ընդհանուր Հարթակ) https://spot.cdph.ca.gov/s/?language=en_US: Եթե պետք է հաղորդել մի քանի դեպքերի մասին, հաստատությունները կարող են ներկայացնել իրենց հաղորդումները՝ օգտագործելով <<Զանգվածային Վերբեռնման Նմուշը>>, որը տեղակայված է SPOT Հարթակում: Դեպքի մասին բոլոր հաղորդումները անհրաժեշտ է ներկայացնել դեպքի մասին տեղեկանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում:

Այն դեպքում, եթե 14-օրյա ժամանակահատվածում հայտնաբերվում են COVID-19-ի թեստի դրական արդյունք ունեցող 3 կամ ավելի դեպքեր, այդ մասին պետք է անմիջապես հաղորդել տարածքային առողջության պատասխանատուներին՝ հաղորդման վերնոշյալ տարբերակով: Հանրային Առողջության Վարչությունը կհամագործակցի ճամբարի հետ՝ որոշելու, թե արդյոք խմբակային վարակման դեպքը բռնկում է, որի դեպքում անհրաժեշտ կլինի հանրային առողջության կողմից քննություն: Հաղորդման և ծանուցումների մասին մանրամասն տեղեկությունների համար Ճամբարների կազմակերպիչները կարող են այցելել Վարակման Կառավարման Ծրագիր TK-12 Դպրոցների Համար:

- ❑ Ճամբարները, որոնց անհրաժեշտ է աջակցություն COVID-19-ի դեպքերի մասին հաղորդման կամ վարակի հետ շփումների կառավարման գործընթացներում, կարող են կապ հաստատել ACDC-Education@ph.lacounty.gov-ի հետ կամ զանգահարել TK-12 Դպրոցի՝ COVID-19 Դեպքերի Հաղորդման Զանգերի Կենտրոն, երկուշաբթիից ուրբաթ՝ առավոտյան 8:00-ից երեկոյան 5:00-ը: Հաստատությունները կարող են նաև կապ հաստատել ACDC-Education@ph.lacounty.gov հասցեով՝ իմանալու զանգերի կենտրոնի համարը՝ հեռախոսով աջակցություն ստանալու համար:
- ❑ Փակեք այն փակ տարածքները, որոնք օգտագործվել են որևէ հիվանդ անձի կողմից, և մի՛ օգտվեք դրանցից մինչ դրանց մաքրումը և ախտահանումը: Հնարավորության դեպքում սպասեք 24 ժամ՝ մինչև տարածքի մաքրումը կամ ախտահանումը:
- ❑ Ապահովեք ախտահանիչ միջոցների անվտանգ և ճիշտ օգտագործումը՝ օգտագործելով անձնական պաշտպանիչ միջոցներ, և ապահովեք մաքրման համար հորդորվող օդափոխությունը: Մաքրման և ախտահանման պարագաները պահեք երեխաներից հեռու:
- ❑ Խորհրդակցելով տարածքային Հանրային Առողջության վարչության հետ՝ ճամբարի համապատասխան պատասխանատուն կարող է դիտարկել՝ արդյոք ճամբարի փակումը և ժամանակի տևողությունը երաշխավորված և հիմնավորված են՝ ելնելով տվյալ համայնքում վարակի վտանգի մակարդակից:

ՀԱՄԱՏԵՂ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄ

- ❑ Պահեք յուրաքանչյուր ճամբարականին պատկանող պարագաները առանձին և անհատական պիտակներով տարաներում, արկղերում, կամ տարածքներում:
- ❑ Ճամբարն ապահովեք բավարար պարագաներով՝ հնարավորինս նվազագույնի հասցնելու հաճախակի հպման պարագաների համատեղ օգտագործումը (արվեստի պարագաներ, սարքավորումներ և այլն):
- ❑ Հնարավորինս խուսափեք էլեկտրոնային սարքավորումների, հագուստի, խաղալիքների, գրքերի և այլ խաղերի, կամ ուսմանն օժանդակող նյութերի համատեղ օգտագործումից:

D. ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

- ❑ Ապահովեք հաղորդակցման համակարգեր, որոնք անձնակազմին և ընտանիքներին հնարավորություն են տալիս ինքնուրույն զեկուցել ախտանշանների առկայությունը և ստանալ արագ ծանուցումներ վարակի հետ շփումների և փակման վերաբերյալ՝ պահպանելով գաղտնիությունը:
- ❑ Սույն արձանագրության պատճենը փակցված է հաստատության բոլոր հանրային մուտքերի մոտ: Հաստատությունները պետք է տեղում ունենան Արձանագրությունների պատճենները՝ պահանջի դեպքում կարդալու համար:
- ❑ Ամբողջ տարածքում տեղադրված են ցուցանակներ, որոնք ճամբարի աշխատակիցներին, ճամբարականներին և այցելուներին հիշեցնում են, որ խստորեն հորդորվում է կրել դիմակ փակ տարածքներում՝ համաձայն հանրային առողջության պատասխանատուի հրամանների: Տեղադրված են ցուցանակներ, որոնք այցելուներին կարգադրում են մնալ տանը, եթե հիվանդ են և ունեն շնչառական ախտանիշներ:
- ❑ Անձնակազմին և ճամբարական ընտանիքներին տրամադրեք Հանրային Առողջության Վարչության՝ Ճանապարհորդության Խորհրդատու փաստաթղթի պատճենը կամ ուղղորդեք այցելել կայքէջ:
- ❑ Հաստատության առցանց հարթակները (կայքեր, սոցիալական լրատվամիջոցներ և այլն) հստակ տեղեկություններ են տրամադրում COVID-19-ի անվտանգության վերաբերյալ:

E. ԿԱՐԵՎՈՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՎԱՍԱՐ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

- ❑ Առաջնահերթություն է տրվել ճամբարականների համար կարևորագույն ծառայություններին:
- ❑ Ձեռնարկվել են միջոցառումներ՝ տրամադրելու ծառայություններ այն ճամբարականներին, որոնք ունեն շարժունակության սահմանափակումներ և/կամ հանրային տարածքներում ենթարկվում են բարձր վտանգի:

Վերոհիշյալ միջոցառումներում չներառված ցանկացած լրացուցիչ միջոցառում պետք է նշվի առանձին էջերի վրա, որոնք բիզնեսը պետք է կցի այս փաստաթղթին:

Այս արձանագրության մասին ցանկացած հարցի կամ մեկնաբանության համար կարող եք կապ հաստատել հետևյալ անձի հետ.

Բիզնեսի կոնտակտային անձի անունը՝ _____

Հեռախոսահամարը՝ _____

Վերջին Վերանայման Ամսաթիվը՝ _____